

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Ք Ե Շ Ե Ն Յ ՈՒ

ԼԻՎԱՐԿԻ ԶՐՐԱՇՅԱՆ, ԹՐԱՄԱՆՅԱՆ և հալ գրականության ավանդույթներ-
րը. ՀՀ ԳԼՄ Հրատարակչություն, Երևան, 1994, 512 էջ:

Տպագրվեց անվանի գրականագետ, ակադեմիկոս էդվարդ Ջրբաշյանի նոր մենագրություն-
ներ՝ Հովհաննես Թումանյանին նվիրված նրա հոստոթյան հրոտրդ գիրքը: 1986 և 1988 թթ.
յույս են տեսել այդ շարքի առաջին երկու գրքերը՝ նվիրված Թումանյանի պոեմներին (հրոտրդ
հրատարակություն) և մեծ րանաստեղծի ստեղծագործական պրոբլեմների քննությանը:

Հովհաննես Թումանյանի մասին շատ է գրվել: Դեռևս կենդանության օրոք նա ղնահատ-
վել է իր րն աչղային խոշոր րանաստեղծ, սիրվել և մեծարվել է ժամանակակիցների կողմից:
Վահան Տերյանը 1914 թ. «Հայ գրականության գալիք օրը» ղեկուցման մեջ, ինչպես գրում է
էդ. Ջրբաշյանը, Թումանյանի «ստեղծագործության ղմբռնման նոր աստիճանի սկիղբն է ղնում»,
այն համարելով «աղղային և համաշխարհային գրական արժեք»: Հետագայում նույնպես Թու-
մանյանը գտնվել է գրականագետների ուշադրության կենտրոնում. նրան նվիրվել են հողված-
ներ և առանձին աշխատություններ, ուսումնասիրվել են նաև արտասահմանյան և ոուս գրա-
կանության հետ նրա ունեցած կապերն ու առնչությունները: Սակայն, ղնայած այդ ամենին,
մեծ գրականագետների տեսողաշտից դարմանալիորեն դուրս է մնացել մի այնպիսի կարե-
վորագույն խնդիր, ինչպիսին է Թումանյանի եհաղղային կապերի պարղարանումը, որին և
նվիրված է սույն մենագրությունը:

Հ. Թումանյանի գրական առնչությունների ղնձեռած հարուստ նյութերի ու փաստերի քնն-
նությանը հեղինակը րացահայտել է Թումանյան րանաստեղծի ստեղծագործության դարավոր
աղունքների լինելիության իրողությունը (սնարեկացիական ղեները, Սայաթ-նույան հումա-
նիզմը և նրա աշխարհընկալման փիլիսոփայությունը, Արովյանի անղնահատելի ժառանգու-
թյունը), նորովի լուսարանել Թումանյանի ստեղծած գրական ավանղուլթի լայն ու համապար-
փակ աղղեցությունը ժամանակի հայ գրողների ստեղծագործության վրա, ինչպես և պարղա-
րանել է այղ ավանղուլթների հարամանուն տրամարանությունը հետագա տասնամյակներում:
Իմաստավորելով աղղային մեծ րանաստեղծի գրական ժառանգության րացառիկ նշանակու-
թյունը հայ գրականության հարաճուն վերելքի գործում, Ջրբաշյանը նրան անվանում է հայ
գրականության «անցյալը, ներկան և ապագան իրար կապող մի անկրկնելի խաղմերուկ»: Նըշ-
վում է հատկապես, որ Թումանյանն թիր էություն մեջ մշտապես կրել է դարերի ղնթաց-
քում ստեղծված գրական վիթխարի ժառանգության մեծ արժեքները, գղացել է նրա ներշնած
րարձր պատասխանատվությունը գղղարվեստական խոսքի որակի և կոլման համարա (էջ 6):
Նվ այնքանով, որքանով, ինչպես գրում է Ջրբաշյանը, «աղղային գրական ավանղուլթը միշտ
առկա է նրա ստեղծագործության մեջ», համակողմանիորեն ուսումնասիրելու համար այղ ֆե-
նոմենը, գղթի հեղինակը Թումանյանի ստեղծագործությունը քննության է առել ող միայն անց-
յալի և իր ժամանակի գրական գործիչների հետ ունեցած սերտ կապերի մեջ, այլ նաև վեր
է հանել նրա գղղարվեստական ավանղուլթի վճոորող գերը 1920—1930-ական թթ. գրական
նոր սերնդի ստեղծագործական կյանքում: Այղ տրամարանության համաձայն էլ մենագրությու-
նը կառուցվել է երեք բաժիններով, որոնք ստացել են «նախորղներ», «ժամանակակիցներ» և
«Հաղղղներ» վերնաղրերը:

Առաղին բաժնում քննարկված են Թումանյանի առնչությունները թե՛ նրա հեռավոր նա-
խորղների՝ Գրիգոր Նարեկացու, Սայաթ-նույայի և թե՛ մերձավոր նախորղների հետ, պարղա-
րանված է, թե ինչ է ժառանղել Թումանյանը անցյալից: Սակայն, հարկ է նշել, որ ժառանղել
հասկացությունը միշտ ղէ, որ նշանակում է ողղղաղիժ փաստերով ապացուցել երկու հեղինակ-
ների ստեղծագործության ոճական, թեմատիկ կամ այլ կարղի թերեացող նմանությունները:
էդ. Ջրբաշյանի մենագրության առանձնահատկությունը և անառարկելի արժեքը կայանում է
մի շարք գրողների և Թումանյանի ստեղծագործության խորթային հատկանիշների նորին քնն-
նության և ավանղուլթի բուն էության գիտական րացահայտման մեջ (Գրիգոր Նարեկացի, Սա-

յաթ-Նոմա, Մ. Նալբանդյան, Ե. Զարենց, Ա. Բակունց)։ Միաժամանակ բարդ և տարողունակ աշխատանք է կատարված իր ժամանակի հեղինակների գրական ստեղծագործության հետ թուամանյանի բազմապիսի կապերը ճշգրտելու ուղղությամբ։ Այստեղ արդեն վեր են հանվել գրական ավանդույթի կոնկրետ դրսևորումները՝ կապված լեմայի ընդհանրության, պատկերների և ոճի փոխառության, գրականագիտական այլևայլ գործոնների առկայության հետ։ Այս առումով բացառիկ արժեքավոր տեսական ներդրումներ են՝ «Թուամանյանը՝ Արուսյանի ժառանգորդը», «Աղայան-Թուամանյան», «Թուամանյան-Իսահակյան», «Զարենցը և Թուամանյանը» զուգահեռները։

«Ժամանակակիցներ» բաժնում լայնորեն ներկայացված են ոչ միայն Թուամանյանի գրական-ստեղծագործական կապերը ժամանակի նշանավոր գրողների հետ, այլև հանգամանորեն վեր է հանված Թուամանյանի դերը՝ իբրև ժամանակի հայ մշակութային կյանքի անփոխարինելի ղեկավարի։ Այդ նա՝ էր առաջինը տեսնում և գնահատում իրօրյա և անցյալի խոշոր գործիչների վաստակը, ստեղծում գրական արժեքների չափանիշներ, որոնք ընդունվում էին իբրև անվիճելի նշարարություններ։ Այս բաժնում է խոսվում Թուամանյանի հիմնադրած և երկու տասնամյակ հարատևած «Վերնատուն» և «Հայ գրողների կովկասյան ընկերություն» կազմակերպությունների արդյունաբերական գործունեության մասին, որոնց շնորհիվ աղղային-մշակութային կյանքը, նոր մղումներ ստանալով, ոչ միայն հաղորդակցվում էր եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումներին, այլև այդ քաղաքակրթության դանձարան էր մոծում անցյալի և իր ժամանակի հայ մշակութային արժեքները (Նարեկացի, Սայաթ-Նոմա, Արուսյան)։

Երրորդ բաժինը նվիրված է 1920—1930-ական թթ. գրական շարժման բարդ իրողություններին և Թուամանյանի ավանդույթների ընկալման ու դրսևորումների վերահամարելու Եղիշ Զարենցի, Ակսել Բակունցի, Ստեփան Զորյանի և այլ հեղինակների երկերում, ելն ու անմիջականորեն, առաջնային արվեստագետների գեղարվեստական աշխարհայացքի ձևավորման, նրանց ստեղծագործական որոնումների առումով։

Էղիշ Զորյանի մենագրության ինքնատիպ կառուցվածքը, հարցադրումների բազմակողմանի վերլուծության կերպը և եղրակացությունների անսպասելիությունը մեղ իրավունք են տալիս վկայակոչելու քննական ակնարկների երեք ցայտուն օրինակներ, որոնք տեսանելի են դարձնում հեղինակային լայնատեսք աշխատանքին ծավալն ու խորությունը։ Այսպես, ուշագրավ նորություն է զուգադիր վերլուծություններ կոչված բաժինը, որտեղ հեղինակը՝ առաջինը մեր գրականագիտության ասպարեզում, գրական առնչությունների պարզաբանման նպատակով նախկինում ընդունված կոնտակտային կապերի քննության հետ միաժամանակ ընթերցողին է ներկայացնում գրական միանման երևույթների համադրության օրինակներ՝ հակադրության հիմքի վրա։ Այս միջոցով լուսարանվում են համանման սյուժեներով կամ ժանրային նմանությամբ զրկված երկու հեղինակների գրական գործերի գեղարվեստական տարբեր սկզբունքները։ Զուգադիր վերլուծության նյութ են դարձել Լևոն Շանթի «Լևոն» աղջիկը պոեմը և Թուամանյանի «Անուշ» (առաջին տարբերակ), ինչպես և «Թաղավորն ու շարլին» բալլադը և Դանիել վարուժանի «Արմենուհի» պոեմը։

2. Թուամանյանի և Լ. Շանթի պոեմները հրատարակվել են գրեթե միաժամանակ, 1892—1893 թթ. և նվիրված լինելով արևելահայ գյուղական կյանքին, թեև իրենց բնույթով առերևույթ միանման, բայց տարբերվում են այդ երկերում կիրառված ստեղծագործական մեթոդներով։ Ելն Թուամանյանի պոեմն առաջնային ունակության ուղղվածություն ունի, Շանթի «Լևոն» աղջիկը Զորյանն անվանում է «մի յուրօրինակ ողբերգություն», որը հաստատում է հեղինակի «ողբերգական սիմվոլիստական ղեղադրության բուն հիմքն ու էությունը»։ Այդպիսով Զորյանը միաժամանակ ընդգծում է, որ գրողների գեղարվեստական մտածողության այդ տարբերանքը բնավ էլ մեկին չի բարձրացնում մյուսի հանդիման, քանի որ Լևոն Շանթին նա համարում է «խիստ ինքնատիպ, առաջին իսկ քայլերից իր գրական ուրույն և անխոտոր ճանապարհն ընտրած գրող», որն «աշխարհը միշտ տեսել ու ներկայացրել է բոլորովին այլ կերպ» (էջ 326)։ Ավելին, նա մերժում է անընդունելի այն սովորույթը, երբ անցյալներում, հաշվի առնելով Թուամանյանի մեծությունը, գրականագետները, «գիտակցաբար թե տարբերանքներն ղեկավարվելով նրա «անվերապահ ղեղադրության կանխադրությամբ, գրողների գնահատել են այն չափանիշով, թե նրանք որքանով են հեռացել Թուամանյանից և կամ մնացել հարազատ նրան»։ Այս իմաստով ուշագրավ է հեղինակի ևս մի միտքը, որը նրա անաշխարհական վկայությունն է, խոսելով այն վերապահ վերաբերմունքի մասին, որ Թուամանյանն է ցուցաբերել ժամանակակիցների կողմից մեծ գնահատականի արժանացած «Հին աստվածներ»

դրամայի նկատմամբ, Ջրբաշյանը գրում է. «Տվյալ դեպքում, ինչպես նաև «տարաշխարհիկ» գրողներին գնահատելիս, Թումանյանն ընկնում էր որոշ միակողմանիության և չափադանցության մեջ, ակամայից կասկածի էր ենթարկում հակադիր ստեղծագործական սկզբունքների օրինականությունը» (էջ 347):

Դանիել Վարուժանի «Արմենուհի» պոեմը և Թումանյանի «Թագավորն ու շարլին» բալլադը դրվել են պատմական միեւնոյն ժամանակաշրջանի՝ Հին Զուղայի ժողովրդի գերեզմանության դրամատիկ փաստերի հիման վրա: Սակայն, շնայած թեմայի ընդհանրությանը, բանաստեղծները ղեկավարվել են դրական-ստեղծագործական տարրեր սկզբունքներով: Վարուժանը, շեղվելով պատմական գրականության փաստերից, թեման ծառայեցրել է հայրենասիրական գաղափարի դրվատմանը, ուժեղ ու հպարտ անհատի մեծարման խնդրին: Թումանյանը, սակայն, հավատարիմ ուսուցիչական իր մեթոդին, բալլադը դարձրել է պատմականորեն խորագրված ճանարտացի մի գործ, համամարդկային գաղափարների ընդհանրացման մի հակիրճ, բայց բացառիկ ամբողջական ստեղծագործություն:

Ընդգծելով հանդերձ այդ երեք հեղինակների ստեղծագործական մեթոդների տարբերիչ գծերը, Ջրբաշյանը նրանց ոտնգծած արժեքները գնահատում է իրեն կարևոր ձեռքբերումներ, ժամանակի հայ դրականության բաղադրանքային և հարստության պերճախոս ապացույցներ:

Երկրորդ օրինակը, որ դարձյալ մեր գրականագիտական մտքի մեծարժեք նորություններից է, կապվում է Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի բանաստեղծական համակարգերի պարզարանման հետ: Ինչպես մի շարք այլ դեպքերում, այս հարցում նույնպես անցյալի գրականագետները, խոսելով երկու բանաստեղծների համեմատական քննարկման մասին, անդրադարձել են միայն ընդհանուր դոգադրություններին, չփորձելով մերձենալ նրանց բանաստեղծական համակարգերի տարբերիչ գծերի բացահայտմանը: Այդ գործին, հարկավ, խանգարել է պատմական ժամանակաշրջանում իշխող գաղափարական այն սխեման, երբ, ինչպես Ջրբաշյանն է գրում, «անհարմար է համարվել» մեծ արվեստագետին որևէ ոչ ռեալիստական հոսանքի հետ կապելը:

Հանգամանքներն վերլուծելով բանաստեղծների գրական տարրեր համակարգերը, գրքի հեղինակը նշում է, որ նրանք, երկու խոշոր անհատականություններ լինելով, ներկայացնում են սերկու տարրեր բանաստեղծական աշխարհ, որը նույնպես խոսում է դարասկզբի հայ գրականության լուրջ գոյության մասին: Սակայն, ըստ ամենայնի լուծելով Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործությունների ինքնատիպության խնդիրը, Ջրբաշյանն ամենևին էլ այն կարծիքին չէ, թե վերահիշյալ հարցերի լուծումն ավարտված է. նա շրջահայեցողին եզրակացնում է. «Թումանյանի և Իսահակյանի բանաստեղծական համակարգերը XX դարի հայ գրականության մեծագույն նվաճումներից են, իսկ նրանց ուսումնասիրությունը, ինչպես նաև համեմատական քննարկումը պատկանում է հայ գրականագիտության հավերժական անսպառ թևաների թվին» (էջ 257):

Երրորդ օրինակը, որ անհրաժեշտ ենք գտնում վկայակոչել, Ակսել Բակունցի և Հովհաննես Թումանյանի ստեղծագործական առնչությունների քննությունն է: Առաջին հայացքից թվում է, թե հիմքեր չէին կարող լինել հաստատելու երկու տարրեր սերունդների խոշոր գործիչների գրական կապերը, որոնց գրելաձևն ու ոճը ակնհայտորեն տարբերվում են միմյանցից: Ջրբաշյանը, որ 1930-ական թթ. հայ գյուղի կյանքը պատկերող բակունցյան պատմվածքները համարում է հոթումսոյանական ժամանակների հայ գյուղի պատմական դարգացման հաջորդական փուլի նկարագրությունը, այդ չի պայմանավորում երկու գրողների ստեղծագործությունների նմանությունը: Նա այն միտքն է հայտնում, որ Բակունցը հայ գյուղի կյանքն ու հեռանկարները տեսնելու առումով է, որ ուղղակիորեն առնչվում է Թումանյանի հետ, իր պատմվածքներում խորապես բացահայտում ժողովրդի ազգային քնավորության էական գծերը:

Ակսել Բակունցին համարելով Թումանյանի «անմիջական և ամենատաղանդավոր ժառանգորդը», Ջրբաշյանը նրանց ստեղծագործության մեջ տեսնում է հստակորեն արտահայտված «գրականության և կյանքի, գրողի և ժողովրդի կապերի ըմբռնման» համանման արտահայտություններ: Կարծում ենք ամենահետաքրքրականը այս եզրակացության մեջ այն միտքն է, որ եթե Բակունցի ստեղծագործությունը ընկալվում է Թումանյանի հաստատած մեծ ավանդույթի զորություն, ապա Թումանյանի ընդհանրապես ճայրհեղ գրականությանը պրագմատիկ ավելի ցայտունորեն է երևում Ակսել Բակունցի արձակի հայտնությունը: Խաչաձև առնչակցության մի խոսուն օրինակ:

Մենագրության բաժիններից իր քննարկով զանազանվում և մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննես Թումանյան—Վահան Միրաքյան, ավելի ճիշտ՝ «Անուշ»—«Լավվարի որոր» պոեմների ստեղծագործական կապերին նվիրված զուգարկ։ Հաշվի առնելով այս պոեմների փոխադրեցության շուրջը հյուսված անհիմն ենթադրությունները և Թումանյանի նկատմամբ Միրաքյանի անբարեկամության արտահայտությունները, մենագրության հեղինակն իր խնդիրն է համարել մեկընդմիջ պարզություն մտցնել այդ հարցում։ Այս իմաստով ուշագրության արժանի է նրա այն սկզբունքը (մի բան, որ երևան է դալիս նաև Թումանյան-Դեմիրճյան փոխհարաբերությունների քննարկման ժամանակ), ըստ որի թեև «շնորհակալ գործ» չէ փոփոխել մեծ գրողների կյանքի կենցաղային մանրուքները, բայց և չի կարելի շրջանցել նրանց հարաբերությունների մեջ եղած խուժերն ու բարդությունները, որովհետև «նման խուժերը» ևս, վերջին հաշվով պատկանում են գրականության պատմությանը և պետք է գրանցվեն նրա տարեգրության մեջ (էջ 263)։

Եվ այսպես, ամենայն բախնդրությամբ և անառնությամբ Զորաշյանը պարզում է երկու պոեմների հրատարակության ժամանակի, նմանությունների, փոխադրեցությունների հետ կապված հանգամանքները, նշում դրանց հեղինակների միջև առաջացած «սասունության» իրական հիմքերը, վերականգնում գրական երկու նշանավոր հուշարձանների ստեղծման հավաստի պատմությունը։ Եղբորկացությունը միանշանակ է, հիմնավորված և արդարացի։ Միրաքյան բանաստեղծն ունեցել է ստեղծագործական ներշնչման մեկ, հզոր բռնկում և այնուհետև պետք է հաշտվեր այդ ներշնչանքի անդառնալի կորստյան հետ։ Նա, սակայն, չէր հաշտվում այդ դժգոհ իրողության հետ։ Շրջանցելով այն փաստը, որ «Անուշի» առաջին տարբերակը տպագրվել էր «Լավվարի որսից» մոտ տասն տարի առաջ, նա զանազան առիթներով ակնարկում էր «Լավվարի որսը» պոեմից Թումանյանի կրած իրր թև ազդեցությունը և մասամբ էլ նրան մեղադրում էր հետագա իր անհաջողությունների համար։ Զորաշյանը, որ հանգամանորեն ուսումնասիրել է Միրաքյանի ձեռագրերի մեծածավալ արխիվը, ծանոթացել գրական նորանոր գործեր ստեղծելու նրա բազում փորձերի հետ, հայտնում է, որ բանաստեղծն ինքը լինելով 1920—1930-ական թթ. իր նոր գործերը հանձնել է տպագրության, բայց հաջողության չի հասել, քանի որ դրանք իրենց զեղարվեստական ցածր որակի բերումով տպագրության իրավունք չեն ստացել։ Թումանյանին ներկայացված անհիմն մեղադրանքը, թե իրր նա խանգարել է Միրաքյանին, միանգամայն հերքվում է փաստերի ուժով։

Սակայն ճակատագրին հաճո է եղել Միրաքյանի գրական ժառանգության հետ կապված այդ բաղանջնաձիգ պատմության մեջ մտցնել ևս մեկ խճճված հանգույց, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ։ Հաշվի առնելով հարցի քարոշական կշիռը 1962—1979 թթ. Հայաստանի Ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի կոլեկտիվի հրատարակած «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակի համապատասխան բաժնից՝ խմբագրական կոլեգիայի անգամների և «Պատմության» հեղինակների ուշագրությունից վրիպելով, ղուրս է մնացել Միրաքյան գրողը։ Ինստիտուտի տնօրեն և խմբագրական կոլեգիայի անդամ էդ. Զորաշյանը աղնվորեն խոտովանելով այդ ճգնաժամի քաղաքական անպատշաճ փաստը, գրում է. «Դժբախտաբար սխալն անուղղելի է, և մեզ մնում է ներողություն խնդրել բանաստեղծի հիշատակի առջև» (էջ 296)։

Սույն մենագրության Միրաքյանին նվիրված հանգամանալից և անկողմնակալ քննությունն ինքնին տալիս է այդ բանաստեղծի ժառանգության գիտական գնահատականը, նրան հատկացնում իր արժանի տեղը հայ գրականության պատմության մեջ։ Կատարված քաղաքական, թեև խսկապես ցավալի, շտկված է Զորաշյանի կողմից և թող թույլ տրվի մեզ ասել՝ շտկված է ասպետորեն։

Առհասարակ գրքի այս հատվածի շարադրանքը մեր գրականագիտական մտքի ակնառու ձեռքբերումն է, որը, քննական անաչառ մոտեցման զսպական օրինակներից կարելի է համարել։ Ինչ վերաբերում է ողջ մենագրությանը, ապա Թումանյանին նվիրված եռագրության այս ամփոփիչ գիրքը կատարյալ նորություն է, մի նոր, դիտական համակարգի մշակման և համակողմանի հետազոտության մեծապես հաջողված օրինակ։ Այն աչքի է ընկնում ոչ միայն շրջանառության մեջ դրված բազմապիսի փաստերի ոսկերչական համադրումով, դրանց վերլուծության խորությամբ և տրամաբանական փայլով, այլև շարադրանքի դալարությամբ, հեղինակային խոսքի անկեղծությամբ և այս գրքին բնորոշ «ինտիմ» ոճով։ Այս այն բարեպատեհ երևույթն է, երբ Մեծ դասականը գտնում է իր արժանավոր ուսումնասիրողին։ Այս առիթով կուզենայինք հիշել Թումանյանին նվիրված մի հողվածի խորհրդանշական պատգամը։

Հովհաննես Թումանյանի կենդանության օրոք, դեռևս 1912 թ. հրատարակված «Գարուն» ամսանախի կրթող գրքում Թումանյանին միաժամանակ կրկու հոգված է նվիրվել: Դրանց հեղինակներն իրեն պատմաբան Դավիթ Անանունը և զրականագետ Պողոս Մակինցյանը: «Հովհաննես Թումանյան» իր մեծարժեք հոդվածում Մակինցյանն ամենայն համոզվածությամբ Թումանյանին անվանում է հայ «մեծագույն ազգային բանաստեղծ» և հանձնարարում է հայ գրաթնագատներին՝ առաջիկայում զբաղվել Թումանյանի պոետիկ զարգացման մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Է՛լ տվելի պատկերավոր արտաբերելով իր այդ առաջարկը, նա ավելացնում է, թե «Հովհաննես Թումանյանի «Օրերն ու զործերը» ոպարում են իրենց լերներին: Խուս դրական աղետ ն. Ս. Լևոնբեր (1877—1934) աքի է բնկել Ա. Ս. Պուշկինին նվիրված մեծարժեք մենագրություններով և Վենզերովի խմբագրությամբ հրատարակված Պուշկինի երկերի վեյհատորյակի ծանոթագրություններով: Հուշելով ապագայում զրվելիք Թումանյանի «Օրերն ու զործերը» գրքի պայմանական վերնագիրը, Մակինցյանը նկատի ունեն լերների հեղինակած՝ Պուշկինի «Դործերն ու օրերը» («Труды и дни») աշխատությունը, որն ունեցել է երկու հրատարակություն:

Այսօր ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ ալադեմիկոս էդ. արդ. Ջրբաշյանը Թումանյանին նվիրված եռագրությամբ հայ թումանյանագիտությունը հարստացրել և այն հասցրել է մի նոր, բարձր մակարդակի: Նրա աշխատությունները տեսանելի են բարձնում Հովհաննես Թումանյանի բազմադասարան արվեստի անալիզի հնարավորությունները և նրա ստեղծած աշխատությունների անսպառ զրահորումները մեր զրական անդաստանում:

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ